

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: info@artsakhib.am


Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ՂԱՄԵՆԻԻ-ՂԱՄԵՂԱԾՈՍԻ
ՈՍՎՈՂԿԵ

**ՄԵՍՐՈՂ ՄԱՇՏՈՑ
ԵՐԵՎՈՒՅԹԸ
ԵՎ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ
ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ԲԱՐԴՈՒՅԹԸ**



Շ.Յ.Յ. 132142

11.50

ԶԻՆԱԻԿԱ

ԱՌԱՔԵԼՅԱՆ-ԲԱԼԱՅԱՆ - Ի.Կ

06.06.2019

Շ.Յ.Յ. 132142

ՄԵՍՐՈՊ ՄԱՆՏՈՑ ԵՐԵՎՈՒՅԹԸ

ԵՎ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ

ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ

ԲԱՐԳՈՒՅԹԸ

(գլխամեթոդական ձեռնարկ-ուսումնասիրություն՝
հանրակրթական և բուհական սովորողների համար)

57444

ք. Մտեփանակերտ, «ՍՈՆԱ»

- 2006 -

ՀԴՏ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (27) 42
Ա 706

*Մեթոդական ձեռնարկը նվիրվում է հայոց ոսկե-
ղենիկ գրերի գյուտի և մնարասի առաջին դպրոցի
ստեղծման հաղթահանողների 1600-ամյակին*

ԱՌԱՔԵԼՅԱՆ-ՔԱԼԱՅԱՆ Ձ.

Ա.706 Մնարոպ Մաշտոց երեսույթը եւ հայոց ազգային գաղափարաբանու-
թյան բարդույթը: Ջինաիդա Առաքելյան-Քալայան: Ստեփանակերտ,
«Սոնա» գրատուն, 2006 թ.: 32 էջ:

Ներկայացվող մեթոդական ձեռնարկը յուր տեսակի մեջ եզակի և արժեքավորող, գիտականորեն ապացուցելի ուղենիշ է հանդիսանում:

Աշխատանքում առաջին հերթին ցույց են տրված այն քաղաքական դրդապատճառները, որոնք ստիպել են Մ.Մաշտոցին ծավալել բուռն, բազմաշերտ գործունեություն կապված հայոց եւ քրիստոնյա ազգերի համախմբմանը մի գաղափարի, գաղափարակառույցի շուրջ ընդդեմ օրավուր ծավալվող մահմեդական աշխարհի ծուլող եւ նենգ, երիցս վտանգավոր քաղաքականության...

Հանրակրթական դպրոցի և բուհական համակարգերի դասընթացների ժամանակ համապատասխան բնագրային, քննատեսական աղբյուրների հիման վրա հերմենևտիկ (մեկնաբանական) եւ աքսիոլոգիական (արժեքաբանական) քննումներով վեր է հանված Մ.Մաշտոցի կերպարի ուսուցման արդիական ձևաբարդույթը...

Այն հիմնախնդրային, մեթոդաուսուցողական հնչողություն ունի հայոց գրերի ստեղծման, դպրոցաշինության, հայ մշակույթի, ազգային գաղափարական, քաղաքական մտքի զարգացման գործում նմանատիպ տիեզերաթռիչքների, հաղթատոների 1600-ամյակի առթիվ...

ԳՄԴ 63.3 (27) 42

ISBN 99941-58-18-X

© Ձ. Առաքելյան-Քալայան, 2006

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ԵՐԵՎՈՒՅԹԸ ԵՎ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՐԳՈՒՅԹԸ

Ցանկացած սեռի բարձրագույն արվեստը հիմնված է գիտության վրա, առանց գիտության չի կարող լինել ոչ կատարյալ ստեղծագործություն, ոչ կատարյալ գնահատական...

Դերբերտ Սպենսեր

Ազգային գաղափարաբանությունը իրական հասկացություն է և գիտականորեն միանգամայն ճանաչելի...

Այն հարաբերական է ազգային ոգուն... Բայց ոգին և գաղափարը նույնարժեք չեն...

Ոգին իռացիոնալ է... անբանաձևելի, գաղափարը՝ երևութաբանական...

Սերգեյ Սարինյան

Հավիտենական գոյութեությունների, գաղափարազնունդների ու գաղափարահայտնության, իրանկանի և անզնելիի, անբեկանելիի հարահարցերը, անշուշտ, լավագույնս ընդգծված ենք տեսնում «Պառնասը և աթենական դպրոցը» Ռաֆայելյան հանճարեղ կտավում, հին աթենական իմաստասերների՝ Պլատոնի, Արիստոտելի կերպավորումներում, որտեղ Պլատոնը ձեռքը ուղղել է դեպի անհունություն, տիեզերք, երկինք, Արիստոտելը՝ դեպի երկիր, մատերիա, այսինքն՝ այս երկու հզորները իրենց աշխարհայացքով ցուցում, մեկնում են իդեայի և մատերիայի, իդեալիզմի և մատերիալիզմի հավիտենական բախումը, քննումը, մեկնումն ու արժեքավորումը մտածողության և կեցության հարաբերակցության ու հակադրության ձևությամբ...

Ո՞րն է առաջնային, կարևորված կարգը՝ մտքի և շրջապատող երևույթների մեկնությունները, գաղափարների, մտածությունների ռացիոնալ և իռացիոնալ սինթեզը, կամ կեցության այլաշերտ կերպերը...

Արդյոք, քննելի՞ են մարդու ներաշխարհը, իմացության շրջանակները, տիեզերքի, բնության, երևույթների, իրերի, սիստեմների, ոգու աշխարհները, մեկնելի՞ են մտածողության, գաղափարների ընկալումները, աշխարհի ճանաչելի ու անճանաչելի, սահմանի ու անսահմանի կերպավորումները...

Ընդհանրության մեջ, էվոլյուցիոն ժամանակաընթացներում այլ կտրվածքներ, մասնակի համակարգերի բարդույթ է ներկայացնում գաղափարաբանությունը, ազգային գաղափարաբանությունը իր հնարավոր գործունեությամբ...

Որո՞նք են նրա սկզբունքների, ձևույթների մեկնակարգը, սահմանման օրինացուցը, գիտականորեն ապացուցող փաստախնդիրները, բացատրակերպերը...: Ո՞րն է առարկայի ճշգրիտ գիտական սահմանումը, ինչպիսի մտահանգման են հանգում տիեզերքը, մարդկային բնույթները, շրջապատող աշխարհն իրենց հարարթուն ու հարափոփոխ շրջույթներով...:

Ո՞րն է ազգային գաղափարաբանության ոսկեգեղձը, արթնտիպը, լինելության սահմանը և անքննումի քննելին, ոգեղեն ցոլացումը, նրա հավատաքննության մեկնումը...:

Թերեւս, Յոսփ. Թումանյանը հայ ժողովրդի ոգեղեն ցոլացումների աշխարհագրական լանդշաֆտն թվարկելով, հարցադրման գնալով, միաժամանակ, ընդգծում է յուր մտքերի նպատակադրույթը՝ մեկնել հայ ազգային գաղափարակառույցի սահմանաբարերը. «Ո՞րն է հայ ժողովրդի պատմական ճանապարհը. նրա գոյության խորհուրդը, նրա ոգին... է՞ս ո՞ւր որոնենք այդ ոգին...»: Յուրաքանչյուր ժողովրդի լինելության իմաստը ամբողջանում է պատմության, գոյատեւումի, մաքառումի փիլիսոփայությամբ, որը նաեւ ընդգծում է այդ ժողովրդի ազգային դիմագիծը, գաղափարական էությունը, ըստ այդմ՝ գաղափարաբանությունը իդեան. իդեալոգիան: Դրանք, ըստ էության՝ փիլիսոփայության քննամեկնաբանն են դիտում: Մեծ մտածող Շելլինգը ահա թե ինչ է ասում այս մասին. «Փիլիսոփայությունը, որ զբաղվում է բացառապես իդեաներով, կոչված է արվեստի պատկերային համակարգում բացահայտելու միայն ընդհանուր օրենքներ, ըստ որում՝ միայն իդեաների ձևույթ...: Զանգի արվեստի փիլիսոփայությունն ըստ էության աշխարհի բացարձակ արտապատկերն է արվեստի ձեւի մեջ»:¹

Եթե փիլիսոփայականը կեցության կերպն է գեղարվեստական երկերում, ապա նա գոյակերպն է հասարակական կյանքի մեջ՝ մարդու գոյամասը:

Ինչպիսի՞ մեթոդներով կցուցվեն ազգային գաղափարաբանության գիտական բացատրությունը...:

«Նրա (ազգային գաղափարաբանության) ոլորտը ազգի գոյաբանության են բնապատմական ինքնության տեսական-փիլիսոփայական եզրերի ստեղծումն է, ազգի, որպես տիեզերական սուբյեկտի հաստա-

տումը՝ էքոնոմարդարանական, պատմատարածքային, սոցիալ-աշխարհահաքաղաքական եւ հոգեւոր-մշակութաբանական հատույթներում»¹. տրամաբանում է Ս.Սարիյանը:

Գաղափարաբանություն. այսինքն՝ քննամիտություն գաղափարի շուրջ, խոսություն՝ էքնոսի, ազգի մտածության, գերխնդրի, գերգոյախնդրի շուրջ, այսինքն՝ ազգաշինության, ազգագիտության կառուցողական փորձ՝ հասնելու ընտրյալ ճանապարհի ծիրը, այսինքն՝ մատերիական ու ոգեղենական-գաղափարական հարուշարժի ընթացածգտում կեցության ու տիեզերքի օրենքների ներքին ու արտաքին կարգերում...:

Արդյոք, հայ ազգային գաղափարաբանությունը վերջնականորեն ճշգրտված գիտական համակարգ է ու եմթակա չէ՞ այլ պատմական, հոգեբանական, մշակութային շարժերի, քննումների, լրացումների...:

Որպես տիեզերական սուբյեկտ հայ ազգը լինելության ո՞ր կերպի կրողն է...:

Արդյոք, ազգային գաղափարաբանությունը հարակա ազգ կատեգորիայի պատմության, դպրության, մշակույթի, քաղաքագիտության, գրականության լինելության, հաստատումի, քննողականության փիլիսոփայությունը չէ՞ բոլոր իզմ ու կարգերից դուրս և ներս...:

Եվ, արդյոք, պատմությամբ ցուցված, փաստված, ազգի մտահորիզոններում զուգահեռված ու... վանված պահպանության, բնագրի ու հասկացության, գոյատեւումի, մտասևեռումների հանրագումար ձգտումները չեն՞ ժամանակաչափերում ու տարածաընտրողականության կատեգորիաներում մեկնելի դիտույթներ...: արդյոք տիեզերասուբյեկտազգ հասկացության մտաբևեռացումները ոգու, ազգային ոգու հարաշարժ ու անենթակա բևեռացումները չեն՞, որ առաջնությամբ անելանելին, անէութենականը դարձրել են ելանելի, երևութական, հաճախ գծել դրանց վերապատմական, գուցե թե՞ մետաֆիզիկական սահմանակարգը, սահմանումը (դեֆինիցիան)՝ գիտականորեն ընդգծումի տանելով հաքցադրումը...:

Արդյո՞ք, հայ գաղափարաբանության սևեռումները պետք է միմիայն փնտրել, փորձել փնտրել սկսյալ միջնադարյան սկզբնափուլից՝

1. Шеллинг, "Философия искусства", Москва, 1966, стр. 53

1. Սարիյան Ս., «Հայ գաղափարաբանություն» (պատմաքննական տեսություն), Ե., «Զանգակ-97» իր., 1998, էջ 5

XVII - XVIII, կամ այլ դարերից, թե՞ ավելի հին ժամանակներին եւս վերապահենք այն...

Գրաքննադատ Ս.Սարինյանը քննության դնելով հայոց ազգային գաղափարաբանությունը՝ հատկապէս շեշտում է նրա պարբերացումները. «Խնդիրն այժմ առարկայի պատմության պարբերացումն է եւ նրա մտավոր հարստության գիտական ընդհանրացումը»:¹

Ըստ մեկնաբանի՝ ազգային գաղափարաբանությունը առաջադրել է «ազգի քաղաքական, սոցիալական, մշակութային զարգացումներն ուղենշող տեսություններ, որոնք համակարգում են հայոց պատմության փիլիսոփայությունը»:²

Իհարկե, քրիստոնեական կրոնի հաստատողները Տրդատ Մեծի հրամանով եւ Գրիգորի ջանադրությամբ հողին հավասարեցրին հայ ժողովրդի հին հեթանոսական հարուստ եւ դարավոր մշակույթը, սակայն, որն ուներ յուր՝ պատմության, գոյատեւումի, ստեղծումների, պայքարի, բանաբանության փիլիսոփայությունը: Իսկ դա հայ ժողովրդի մաքառումներով լի վարքամատյանի՝ հնագույն ժամանակների մի սքանչելի, չորոշարկված, չգնահատված, չհաստատված փաստի գոյությունն է հատկանշում, երեւոյթը՝ ազգային գաղափարամիտումների շուրջ:

Եթե հայենք պատմական ոսկեդարյան հատույթին ու դրան նախորդած հայոց մաքառումների ասպետակիրների՝ Տրդատի ու իր հետնորդների, ձեռքբերումներին, նպատակադրածի կորուստներին եւ հուսացումներին, քաղաքական արյունալի ճանապարհների առկայությանը եւ նոր մտախիզախումներին, ապա՝ ինքնին այդ ամենից առթող ու այդ ամենին նպատակադրված հանրագումար կարելի է համարել հայոց ազգային գրի եւ դպրության ստեղծումը՝ սքանչելագործ ու առաջին քաղաքական մեծ գյուտարար Մեսրոպ Մաշտոցի կողմից:

Հայոց գիրը, հայ ազգային գաղափարակառուցի վեհ ու անկրկնելի, անդրովելի, ամրակոփ տաճարի միառոտ սյունն է, որի վեր խոյացող սլացքը մի նոր, ոգեղեն փիլիսոփայական իդեալակերպ է, մի նոր ազգային ցուլացումների ու պայքարի պատրաստվող վիմեղեն ու գրեղեն հրաշակերտ, այսօր արդեն՝ 1600-ամյա անպարտ ու արքեմի այրուծի՝ առ-

1.Նույն տեղում, էջ 5
2.Նույն տեղում, էջ 5

ջեւից փոթորիկների պես՝ ջրում եւ ցամաքում ու ժամանակներին ընդհատաջ սլացող, խոսքակիր եւ խորհրդակիր Քուռիկ Ջալալի հրեղեն առաջնորդությամբ, մարտաթռչքով սլանում է ժամանակներին դեմհանդիման՝ երբեք չխամրող, չպարտվող եւ վսեմակիր ոգով...

Ու ժամանակներն այդ արծանագրվեցին հայոց ոսկեղենիկ պատումաշարերում, հիշատակարաններում, հայսմավուրքներում, քրոնիկներում, երկասիրություններում՝ որպես ոսկեդար...

Այն հայոց ազգային գոյատեւման էջը ներկայացնող ո՞վ, որտեղի՞ց, որպիսի՞ն լինելու եւ դեպի ո՞ւր գնալու ճանապարհներն է ցույց տալիս, որն է անչափելի կորուստների ու ոգեղեն ցուլացումների միջնորդավորված մի հիշողություն է իրենից ներկայացնում՝ յուր խորքում գաղափարակարգվող միտումներով, փիլիսոփայությամբ... Դեպի ո՞ւր է ձգվում հայ ժողովրդի ճանապարհը, ի՞նչ գաղափարներ են նրան առաջնորդում, ովքե՞ր են առաջնորդները՝ ի՞նչ մտայնությամբ, ի՞նչ քաղաքական, մշակութային ճանապարհներով, ի՞նչ գաղափարաուղղվածությամբ:

Եվ... ի՞նչ ծնելով, ի՞նչպիսի՞ նպատակով, ի՞նչ ճանապարհով զօրւթհարցադրումները հայոց ազգային գաղափարակառուցի հենքն են մատնանշում...

Եթե հայոց պետական, քաղաքական, իշխանական, հոգեւոր այրերին չհաջողվեց պահպանել անկախություն եւ Հայաստանը բաժանվեց (387 թ.) Բյուզանդիայի ու Պարսկաստանի միջեւ, ապա այն ճակատագրորեն ծանր եղավ եւ նոր գոյատեւումի, ազգային գաղափարաբանության ճանապարհներ բացեց եւ ցույց տվեց:

Որոշ դարերով, մի կողմ թողնենք մեծ հետաքրքրությունների, գիտական լուրջ քննումների, հիպոթեզների, ապացուցումների հայտ ներկայացնող հայ ժողովրդի հնագույն՝ հեթանոսական ժամանակների, պատմա-փիլիսոփայության բարդույթը, որից եւ այլքվել ու ստեղծվել է հայոց ազգային գաղափարաբանության կառույցը, այնտեղից հզոր թափով առկայծող պատմական երեւոյթների մեկնությունը, ապա նկատելի, հզոր տեղաշարժ կտեսնենք քաղաքական անհուսալիությունից ծնված հայոց աշխարհում... Ու հայ մեծ գյուտարար Մ.Մաշտոցի կողմից հրաշագործված հայոց գրերի եւ դպրության ստեղծման առկայությունն է: Քաղաքական այդ հերոսական, հեղափոխական, մշակութային սխրանքից Հայաստանում հզոր թափով ընծյուղվեց, զարգացավ եւ փաստելի դարձավ մի երեւոյթ, որը կարելի է որակել որպես հայոց ազգային գաղափարաբանություն՝ հայոց գոյության կերպի փիլիսոփայություն...

Իսկ երեսույթի մեկնումը ամբողջության մեջ հետեւյալն է... Մեծ խոհ ու խորհրդով է Մ.Մաշտոցը գիր ու գրականություն ստեղծել համայն հայրոց ազգի եւ, նույնպէս, հարեւան ժողովուրդների համար՝ միասնական ճակատ ստեղծելու առաքելությամբ՝ ընդդէմ մահմեդական աշխարհի հզոր, քաղաքական, կրոնական ձգտումների...

Այս տեսակետից՝ Մ.Մաշտոցի կերպարի բազմակողմանի մեկնությունը, արժեքավորումը, որը տրված է ուսումնասիրության ամբողջության մեջ, նպատակաուղղված է խնդրո առարկա հարցի բացահայտմանը, որպէս հայրոց ազգային գաղափարաբանության ընդհանուր կառուցի հիմնաքար, ամոփոփող նախագիծ...

Իսկ ժամանակները հայ ժողովրդի պատմության, գոյատեւման եւ գեղարվեստական ստեղծումների մեջ հաստատապէս փաստեցին այս երեսույթի ճշմարտացի, պատմական, փիլիսոփայական ու նաեւ...՝ գիտական լինելը՝ հետագա հայրոց մաքառումներում, կորուստներում եւ անպայմանորեն՝ հերոսացումներում...

Որտե՞ղ է հաստատումը, եղծը, կամ անընդունելին ու քննության չենթարկվածը...

Արդյոք, պարբերացման համակարգ ստեղծելով խնդրի շուրջ բոլոր՝ ժամանակային կարևոր օղակներն են շրջաթում ցուցված, թե՞, այնուամենայնիվ, կա չորաշարկված, հնարավոր սահման՝ հարցի քննության շուրջ...

Ս.Սարինյանը այսպէս է մեկնում երեսույթը. «Սկզբնավորվելով 17-18-րդ դարերի սահմանագծում, հայ գաղափարաբանության դասական շրջանն իր ավարտին է հասնում 19-րդ դարի առաջին տասնամյակներին, հաջորդ սերնդին ավանդելով առասպելա-պատմական հերոսներով բնակեցված աշխարհագրական մի Հայաստան եւ հոգեւոր ստեղծումներով ծանրաբեռ մի Հայ Հանճար...»¹:

Այս եւ նման այլ հարցերի աղերսներ, անդրադարձներ, պատասխաններ մենք սփռված ենք տեսնում հայ ժողովրդի պատմության ընթացքն պայմանավորող, գոյիմաստի մեկնությունը քննող, ազգային գաղափարակառույցի սահմաններն ցուցող եւ արժեքավորող բացառիկ երեսույթների, նվիրյալների ստեղծած հոգեւոր մեծ ժառանգության ու հրեղեն ցուլացումների, մաքառումների, նահատակությունների, հերոսացումների, անմեկնելի խնկարկումների մեջ, որոնք ներկայացրել են հայրոց ազգային գաղափարաբանության բարդույթը այլաշերտ կողմերով: Այդ վիճակներն, ոգեղեն եւ գրեղեն հիմնականույցը Մ.Մաշտոցի հանճարը արարեց...

Արժեքավորը որևէ հարցի շուրջ փաստերը ներկայացնելը չէ, այլ որանց հաստատումը...

Եթե կասկածելի չէ, որ «կարևորագույն գաղափարական գործոն»-ը՝ ազգի հոգևոր կազմությունը գիրքն է, գիրը, ապա, անվերապահորեն, պետք է խորին և վերին խորհուրդ համարենք ու հայենք հայ ժողովրդի պատմության դրամատիկական V դարին, որն անկարագրելի, անկայական հեղափոխականության ժամանակներ է արձանագրում, մանավանդ, որ դրանք անվերապահորեն փաստվեցին -ոսկեդար- պարբերաշրջանով, եթե ոչ ավելի հեռավոր հեթանոսական ժամանակների մտքի ու բազկանց, ազատասիրության, իմաստության, սխրանքների ժամանակաընթացքները չցուցնեք շումերա-աքքադական ու այլ կարգի հիշտակարանների, վիճեղեն հրաշքների դիտմամբ, գրավոր լինելությամբ: Իսկ Սիքա-յել Չամչյանը որոշակի է բանաձեւում հայ ազգային ոգու, գուցե թե՛ գաղափարաբանության բարձրակետի հաղթափմաստությունը. «Դուռն իմաստից բանայ մարդոյ գիրք պատմութեան»², ու եթե ֆրանսիացի մեծ հայագետ Անտուան Սեյեն բացականչում է փիլիսոփայական զարմանքով ու հիացմունքով, թե՛ «Հայերեն այբուբենի համակարգը գլուխգործոց է»³, ու եթե հայ գաղափարահանճարի՝ հայրոց գրով ստեղծված հավերժագնա «Նարեկ»-ի քնարական աստվածաչ, տիեզերագնա հերոս Նարեկացին «ի խորոց սրտի խոսք ընդ աստծո» է ուղղում, ու մեծ հայագետ և գիտնական Մ.Աբեղյանը XVIII դարի հայ երևելի մարդկանց միտքը ուղղված է տեսնում հայ հիմն տավոր կյանքը վերակենդանացնելուն՝ «վերժանել հին հայ կյանքը, գիրն ու գրականությունը»⁴, ապա հարկ է խորագույն գիտականությամբ քննել ու վերհանել, արժեքաբանել թե՛ հայ ժողովրդի պատմության -ոսկեդար- ժամանակահատույթն ու թե՛ դրա հիմնական, զխաստեղծ, հանճարեղ քաղաքագետ գաղափարատիպի, գյուտարարի՝ Մ. Մաշտոց երեսույթի, հանճարեղ տեսլականը... ընդ որում, եթե հայ տիեզերական սուրբելտի՝ ազգի, գոյատիպի մասին Կ.Չարյանը մտախոնկում է այսպէս. «Յեղ մը, որ կուզե ապրիլ՝ պարտավոր է ստեղծել»⁵:

1. Կարինյան Ա., *Այնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հ. 1, Ե., 1956, էջ 156*
2. Չամչյանց Ս., *Պատմութիւն հայրոց, հ. 1, Ե., երՊետհամ. հր., 1985, էջ 45*
3. Սեյեն Անտուան, *Հայագիտական ուսումնասիրություններ, Ե., երՊետհամ. հր., 1978, էջ 508*
4. Աբեղյան Մ., *Երկեր, հ. 4, Ե., 1970, էջ 546*
5. Չարյան Կ., *«Մեկան», 1974, հ. 1, էջ 3*

¹Սարինյան Ս., «Հայ գաղափարաբանություն», էջ 16 ք

Իսկ հայ մտավոր, ոգեղեն հանճարը անընդմեջ տիեզերացույցումն է արձանագրել, արձանագրում, որի անզուգական ընտրյալն էրից է, հարկավ, Մ.Մաշտոց ազգային երևույթը...

Հայ ազգային գաղափարաբանությունը՝ հարատեւումի փիլիսոփայական ընդհանրացումը, որպէս Մ.Մաշտոցի ժաւակած բուռն, բեղմնավոր գոծունեության անկյունաքարը պետք է համարել, նրա նպատակաուղղվածությունը՝ հայ ժողովրդի օրավուր ժանրացող քաղաքական իրավիճակին որոշակի կայունություն, ուղղություն տալն էր, իսկ այդ նրան հաջողելի էր երեւում առաջին հերթին, ինչպէս դիտել ենք, ամբողջ հայութեանը եւ քրիստոնյա ազգություններին համախմբելը, մի գաղափարի տակ հավաքելը, ամուր ճակատ պատնէշելը, ազգային գաղափարակարգ ստեղծելը, որից հետագայում սլացք առան հայոց ազգային գաղափարակառույցի հետ առնչվողներն ու նախանձախնդիրները, առաջնորդներն ու նպատակորոշով շահագրգռվածները, ազատութեան մունետիկները՝ հայութեան պահպանման ոգեկիրները:

Հայոց ազգային գաղափարաբանությունը որպէս գիտականորեն կառուցվող, ապացուցվող, արժեքավորվող համակարգ, իր պարբերացման ժամանակաընթացքներում՝ ելնելով գոյատեւումի, գյուտելու, պայքարի, ազատասիրութեան, արարումի ոգեղեն ցուցումներից, փաստագրել է հետաքրքիր եւ ինքնատիպ դրսեւորումներ...

Մ.Մաշտոց երեսույթի հսկայական հեղափոխական բազմաշերտ գործունեությունը առավելապէս կապված է հայ գրի, դպրութեան, մշակութի, մշակութակերպ հավերժումի, դպրոցաշինութեան, քաղաքական ու ազգային գաղափարաբանական մտքի ստեղծմանն ու սկզբնավորմանը, որը հայ ազգային գաղափարակազմութի հիմնասկիզբն ու հիմնական պատակը, հիմնաքարը պետք է ընդունել եւ գիտականորեն փաստել...

Իսկ այդ հեղափոխական սուբյեկտ եւ օբյեկտ (Մ.Մաշտոց եւ հայոց գրեր) երեսույթների փաստելիությունը մենք վավերացված ենք տեսնում հայ ժողովրդի 1600-ամյա գրեղեն, վիմեղեն, մշակութային կոթողներում, հերոսապատումներում, շատ ու շատ ազգային նվիրյալ գործիչների ստեղծումներում, թռիչքներում, նահատակություններում, հաղթանակներում, հավերժացումներում...

Այս արժեքավոր եւ գիտականորեն ապացուցելի մտադրույթը իրագործելի կերեւա առաջին հերթին Մ.Մաշտոց ազգային մեծ գաղափարագետի, քաղաքագետի ամբողջական կերպարի քննութեան, վերհանման դեպքում, ինչին եւ նպատակադրված է աշխատանքի ընթացքը:

ՄԵՍՐՈՂ ՄԱՇՏՈՅԻ ԿԵՐՊԱՐԻ ՔԵՆՄԱՆ, ՈՒՍՈՒՑՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԳԻԱԿԱՆ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ (բուհ եւ հանրակրթական (ավագ) դպրոց)

*Երանք ծնվում են ինչ-որ հանճարեղ մի հոգնությունից,
Որպեսզի դառնան հանճարեղություն...*

*Մաշտոցը, այո՛, հայ նշանագրերի
գյուտարարը եւ հայ դպրութեան հիմնադիրը
լինելուց առաջ, մեր մեծագույն քաղաքագետն է...*

Պարույր Սեւակ

Կան երեսույթներ, որոնց ցուցումը պատմութեան մեջ դառնում է ժամանակադիր, ժամանակացուց, որոնք նշանավորում են հասարակութեան առաջընթացը, գյուտելու մեջ գծելով հասարակականի, քաղաքականի, մշակութի՝ ազգագրութեան, կրթութեան, դպրութեան (գրական այլապէս ժանրատեսակներ), գոյատեւումի օղակները, ամբողջութեան մեջ ամփոփելով հեղաշրջումի, հեղափոխականութեան բարդույթը...

Դրանցից՝ հազվագյուտներից է Մ. Մաշտոցը, ոսկեդարյան հայ մատենագրութեան, մշակութի, պատմական հեղաշրջման, հայոց անպարտարյունի՝ մատենիկ գնդի՝ հայ գրի ու գրականութեան զորավար-սկզբնավորողը. գիր, որի 1600-ամյա սխրանքը հայ ժողովրդի լինելութեան ոսկեղենիկ վավերագիրն է, նրա իմաստութեան ոսկեգեղը, քաղաքականութեան հաղթանակը, փիլիսոփայութեան արքետիպը...

Մ.Մաշտոց... երեսույթ, որի կերպարի քննութունը, ուսուցումը արդի հայ գրականութեան բուհական (I կուրսեր) եւ դպրոցական (ավագ դպրոց) դասընթացներում կարեւորված մեթոդական գիտադրույթ է հանդիսանում...

Ուսուցման պրոցեսում դասախոսը, ուսուցիչը մուտքի դասընթացը ապահովելուց հետո, մինչ հիմնական նյութին (տվյալ դեպքում՝ Մ.Մաշտոցի կերպարի քննութունը) անցնելը պետք է ցույց տան թե՛ գրական երկի ժանրային առանձնադիտումը (վարքագրութուն)՝ տեսական հիմնավորմանը, թե՛ ինչ է իրենից մերկայացնում պատմական երկը, մեկնեն նրա պատմական ժամանակաշրջանը, երկի գրման քաղաքական պատճառները, հերոսների ունեցած գաղափարայնությունը, երկի գաղափարական բովանդակությունը, կառուցվածքը, լեզվական, շարահյուսական, ոճական անցումները V դարում սկզբնավորվող հայ դպրութեան ֆոնի վրա:

Թե՛ ավագ դպրոցում, թե՛ բուհում մանկավարժը, դասախոսը պետք է նախ եւ առաջ դասը նպատակաուղղված դարձնելու համար կիրառեն ուսուցման համապատասխան մեթոդներ պատմական-գրական կերպարի բացահայտման ուղղությամբ: Խնդիրը կարեւորվում է նրանով, որ Մ.Մաշտոցի կերպարը վերհանելու, մեկնելու համար պետք է ընդգծվի նրա խառնվածքի, աշխարհայացքի այլաշերտ՝ պատմական, քաղաքական, գիտական, մշակութային, լուսավորչական, թարգմանական, գրական, կրթական, կրոնական, աշխարհիկ եւ այլ դրսևորումները գործունեության շերտերը...

Իսկ դա նշանակում է, որ եւ՛ ավագ դպրոցում, եւ՛ բուհում ուսուցիչ-աշակերտի, եւ՛ դասախոս-ուսանողի փոխկապակցված գործունեության եղանակները ցույց կտան ուսուցման մեթոդների կիրառության համապատասխան ձևույթներ՝ առաջին հերթին կապված պատմական եւ վիպական կերպարի մեթոդական վերլուծություններին...

Այս տեսակետից գրականության դասընթացի կառուցվածքը ձեռք է բերում երկակի բնույթ եւ նշանակություն: Այն ուսումնապրոցեսներում պետք է ունենա գիտական հիմք, տրված տեղեկություններն ու փաստերը՝ ճշգրիտ, վավերական, քննություն բռնող, որտեղ ժամանակագրությունը եւս արժեքավոր օղակ կհանդիսանա երկի գնահատելիության պրոցեսում:

Մ.Մաշտոցի պատմական, մշակութային, ստեղծաբանական առաքելությունը, գործունեությունը հիմք տվեց նրա կերպարի բնութագրումներին սկզբնապես իր իսկ աշակերտների կողմից, որոնցից շատերը եղան երեւելի գիտության օղակներում...

Սեժ լուսավորիչ-գյուտարարի կերպարի ուսուցումը պետք է կիրառել դասապրոցեսներում մեթոդական երեք գլխավոր խոսքային, գննական եւ բացառիկ դեպքերում գործնական (գրականության կաբինետ) խմբերում:

Մ.Մաշտոցի կերպարի հերմենեւտիկ (մեկնաբանական) եւ աքսիոլոգիական (արժեքաբանական), ձևույթների կիրառումները իրագործելու համար պետք է ամենամաքսիմալ հնարավորությունները գործադրել ուսումնական նյութը (պատմագրական-հաղորդում, տարաբնույթ փաստեր, տեղեկություններ, գրականատեսաքննական գիտելիքներ, զեղարվեստական այլեւայլ երկեր, պատմական երկասիրություններ, հայսմա-

վուրքներ, պատմական հիշատակարաններ եւ այլն...) հայթայթելուն, որովհետեւ հայ դպրության սկզբնավորումը սկսվում է V դարում Մ.Մաշտոցի գործունեությամբ, գրերի գյուտով...

Ավագ դպրոցում «Մ.Մաշտոցը եւ հայ գրերի գյուտը: V դարի հայ մատենագրությունը» թեմային հատկացված 4 (չորս) դասաժամում ուսուցիչը պետք է կարողանա ցույց տալ ուսուցման երեք փուլի անցումներին համապատասխան մինչմաշտոցյան, մաշտոցյան, հետմաշտոցյան հայ գրականության պատմության ընթացքը կարեւորող քաղաքական իրավիճակը, որին հետեւելով կբացահայտվի Մ.Մաշտոցի պատմական-քաղաքական առաքելությունը, իսկ նրա պատմագիտական, մատենագրական, գրական, թարգմանական, հոգևոր և այլ տիպի մեկնումները կիրազորվեն ուսումնական նյութի օգտագործման միջոցով:

Համապատասխան մեթոդական մակարդակներով, գիտական նյութի արժեքավորմամբ, ուսուցման ուղղվածությամբ, Մ.Մաշտոցի գործունեության տարբեր շրջանակները վերհանելու, կերպարի զարգացումները ներակայացնելու համար եղած պատմաբանասիրական հաղորդումները, գրականագիտական նյութը, V դարի մատենագիրների երկասիրությունները քննելով գալիս ենք հետեւության...՝ փորձել եղած փաստական նյութի հիման վրա ներկայացնել Մ.Մաշտոցի կերպարի հնարավոր ամբողջացումները...

Մեթոդական կրթա-դաստիարակչական խնդիրները՝ գրական, պատմական երկերի կառուցվածքը, կոմպոզիցիան, բովանդակությունը, ձևը, կոնֆլիկտը, գաղափարակառույցը, սյուժետիկ ու պատմավիպական կերպարների համակարգերի ստեղծումը, գլխավոր պատմական կերպարի որակական հատկանշումը հնարավորում են ճիշտ մեկնաբանական-ուսուցողական ձևույթներում ներկայացնել խնդրող առարկա՝ վարքաբանության ժանրի տակ պատմական, վիպական կերպարի ընկալումը՝ ժամանակի սոցիալ-քաղաքական ժանր պայմանների, ազգային պետականության կորուստի, նոր՝ քրիստոնեական հավատի գերմաթատակի՝ ազգ հասկացության համախմբման դեպքում, այդ գծություն ասորական եւ քրեզանդական վտանգավոր ծուլման քաղաքականության դեմ, հայոց գրի ու ազգային հայրենասիրական ճակատի, ազգային գաղափարակառույցի ցուցման եւ ստեղծման, լայն, բազմախորհուրդ գործունեության ընթացքը հատկանշելով...

Միաժամանակ, դիտելի է, որ ուսուցման մեթոդական կառույցներում ցուցված հերոսի կերպարի տարատեսակներում բնավորություն, տիպ եւ այլն, չի տեղավորվում Մ.Մաշտոցի կերպավորումը ներկայացնելու փաստը, ուստի այն պետք է -անհատականացված երեւոյթ- կերպարային ձեւույթում ընդունել...

Քանի որ «Վարք Մաշտոցի»-ն վարքագրության ժանրին է պատկանում, իսկ վերջինս իր տեսածեւոյթով արձակ գործ է, ուստի նրա ուսուցման կառույցները պետք է բխեցնել արձակ երկերին վերաբերող ուսուցողական կարգադրույթից, ըստ նրանց իատկացված առանձնահատկությունների: Վարքագրության հերոսը պատմական երկի դեպքերի մասնակիցն է, յուր ինքնատիպությամբ բարձրացված տիպականության առանձնադիտված աստիճանի: «Վարք Մաշտոցի»-ն չորս ուսուցողական փուլով՝ ընթերցում, պատմական նյութի մշակում, մեկնաբանում, ամփոփում, յուրացման է դրվում եւ՝ ավագ դպրոցում, եւ՝ բուհում...

Մ.Մաշտոցը եղել է աշխարհիկ, հոգեւոր, մշակութային, կրթական, քաղաքական, գրական և այլ բնագավառների գործիչ, գյուտարար, քաղաքագետ-գյուտարար: Նրա կյանքի, գործունեության, գրերի գյուտի, հայ դպրության, մատենագրության ստեղծման, մահվան ու, միաժամանակ, նախագրային հայոց գրի գոյության հարցերի շուրջ հսկայական գիտական նյութ է հավաքվել այնպիսի հայ եւ օտար հայագետների, գիտնականների կողմից, որպիսիք են՝ Խ. Աբովյանը, Դր. Աճառյանը, Է. Աղայանը, Ն. Ադոնցը, Ն. Ակինյանը, Ավ. Բահաթրյանը, Ա. Աբրահամյանը, Լեոն. Ա. Գարագաշյանը, Գ. Մանանդյանը, Ս. Աթեղյանը, Լ. Խաչիկյանը, Ա. Մկրտչյանը, Է. Պիվազյանը, Ա. Մեյեն, Մարկվարտը, Գյուտշմիդտը, Ն. Մառը, Գեյցերը, Զյուրշմանը, Է. Շուցը, Զոլի. Թունանյանը, Վ. Տերյանը, Ավ. Իսահակյանը, Մ. Իշխանը, Ղ. Վարուժանը, Ե. Զարեմցը, Լ. Բաբայանը, Մ. Բախշյանը, Պ. Սեւակը եւ շատ ու շատ ուրիշներ:

Հայ եւ օտար լեզուներով գրվել են ու գրվում են հայագիտական տարբեր բնույթի աշխատություններ, հոդվածներ, մենագրություններ, ուսումնասիրություններ 1600-ամյա ժամանակահատվածով:

Նշանակում է Մ.Մաշտոցի կերպարի ամբողջացումը ստեղծագործական 1600-ամյա ժամանակաշրջանում: Այն իր սկզբնավորման I փուլը ներկայացնում է մեծ գիտնականի ապրած IV-V, հատկապես՝ V դարը, որի լուսավորչական դիմանկարը Մաշտոցի ծավալած

գործունեության հիմքից բխեցնելով՝ ժամանակներին ներկայացավ -ուկեղար- տիտղոսով...

Մ.Մաշտոցի կյանքի, գործունեության շուրջ կատարված հետազոտություններում հակասական են հնչել փաստերը թե՛ նրա ծննդի ու մահվան, թե՛ գրի ստեղծման ժամանակի, վայրի, թե՛ նախագրային գրի գոյության եւ թե՛ այլեւայլ կարեւոր հարցերի շուրջ: Դրանք եւս պետք է ի նկատի առնվեն ավագ դպրոցում (սեղմ կերպով) եւ բուհում (ընդլայնված ձեւույթով):

Եթե ավագ դպրոցում թեման յուրացնելու համար աշակերտը պետք է ընթերցի Կորյունի «Վարք Մաշտոցի»-ն, ապա բուհում ուսանողը հանձնարարություն է ստանում ուսումնասիրելու թե՛ տեսաբանական, թե՛ բնագրային գրականություն՝ ավելի լայնամասշտաբ բնույթով բնագրերի մշակմամբ:

Հատկապես ավագ դպրոցում նյութի յուրացումը աշակերտի կողմից ուղեկցվում է ուսուցչի ակտիվ գործառնությամբ՝ բնագրերի եւ տեսական ոչ բարդ գրականության հանձնարարումով, գրական երկի ժամանակը ներկայացնող քննատեսական կարգի հարցի բացատրությամբ, ժամանակի քաղաքական հարաբերություններում, գրի ստեղծման դրդապատճառների, գրողի աշխարհայացքի (Ա.Տ. Մելիք-Քախշյանը ճշտիվ Մաշտոցին «որպես փիլիսոփա իդեալիստ է»՝ համարում) (այն հետագայում ավելի բացահայտելու), ունեցած նախասիրությունների, գործունեության գաղափարայնության բովանդակալից ներկայացումով... Չէ որ գրողը հաճախ գրական երկում գործող անձաց կամ ժամանակակիցն է, կամ նույնիսկ գլխավոր, ապա երկրորդական գործող կերպարներից մեկը... Կենտրոնական հերոսը «Վարք»-ում Մ.Մաշտոցն է, որի զարգացման ընթացքի շուրջ պտտվում են երկի այուժեփի հիմնական առանցքը, կենտրոնական հանգուցակետը, կառուցվածքը, կոմպոզիցիան, համագույցը, այուժեփի գիծը, գաղափարայնությունը, նաեւ կերպարների համակարգի զարգացումը, գրական երկի ամբողջական քաղաղրամասերը, ձեւն ու բովանդակությունը:

Տեսաբան-մեթոդիստ Ս.Ա.Ռիբնիկովյան այս մասին գրում է.

1. Մելիք-Քախշյան Ա.Տ., Հայոց պատմության աղբյուրագիտություն, Ե., Երեսնի համալսարանի հրատ., 1979, էջ 123

«... գլխավոր հերոսը գործող անձ է, նա է առաջ մղում գործողությունը, նրա վրա են տեղում, թափվում դեպքերը, նա է հեղինակի եւ մյուս հերոսների (եթե կան) խոսակցության առարկան, նա է շրջապատված իրադրությամբ եւ բնությամբ, նա է խոսում տեղի ունեցող անցուղարձի մասին, եւ նրա այդ արտահայտությունները բնորոշ են թե՛ բովանդակության, թե՛ լեզվի տեսակետից»¹:

Ս. Մաշտոցի պատմա-գեղարվեստական առաջին կերպավորումը տվել է Կորյունը նրա կրտսերագույն աշակերտը, «Վարք Մաշտոցի» երկասիրության մեջ: Հայ մատենագրության հիմնադիրն է Կորյունը, որն առաջինն է աշխարհիկ թեմայով պատմական երկասիրություն (վարքագրություն) գրել V դարում: Հաճելիորեն, զարմանալիորեն այն նվիրել է հայ ժողովրդի ամենանշանավոր քաղաքական, մշակութային հաղթանակների ռազմական հաղթանակին՝ հայոց զրի ու գրականության, դպրության ստեղծմանը:

Է. Աղայանը փաստացի գտնելով Կորյունի ներկայացրած պատմական դիտարկումները նկատում է. «Կորյունի հաղորդած բոլոր տեղեկությունները ստույգ են, եւ նրա «Վարքը» ինչպես ամբողջությամբ վերցրած, այնպես էլ ամենափոքրիկ մանրամասնությունների մեջ որեւէ կասկածի ենթարկվել չի կարող»²:

Մաշտոցի ստեղծած հայոց գիրը Կորյունը անվանում է «Հայաստան աշխարհի աստվածապարզ գիրը», իսկ այն ստեղծող մարդու (Մաշտոցի) գործունեությունը՝ «Լուսավոր ուսման ու հրեշտականման առաքինի կրոնավորություն»³: Բանասիրական մեկնություններով «Վարք Մաշտոցի»-ն գրվել է 443-450-ական թթ. միջու ընկած ժամանակաընթացքում եւ սկզբնապես անվանվել է մի խորիմաստ վերնագրով՝ «Պատմութիւն վարուց և մահուան առն երանելոյ սրբոյն Մաշտոցի վարդապետի մերոյ թարգմանչի»...

Հարկավ, երկասիրությունը ներբողյան կարելի է կոչել, որը հատուկ, համապատասխան կառուցվածք, սեռ ու ստեղծման կանոններ ու-

1. Рубникова М.А., Очерки по методике литературного чтения, Москва, 1945, стр. 126
2. Աղայան Է., Նախամաշտոցյան զրի ու գրականության, Մեսրոպյան այբուբենի և հարակից հարցերի մասին, Ե., Երևանի համալսարանի հրատ., 1977, էջ 7
3. Կորյուն, Վարք Մաշտոցի, Ե., Հայպետհրատ, 1941, էջ 23

նի: Ներածակամից հետո գրված առաջաբանում Կորյունը հետաքրքիր խնդիրք է անում յուր ընկերներին՝ աղոթել, որպեսզի հաջողությամբ ու ուղիղ նավեն վարդապետական ծովի ալիքների վրայով համատարած յուր ընձեռած հնարավորությունը կատարյալ մարդու մասին վարք գրելու, «որպեսզի (նրանք) ընդհանրապես և՛ հոգեւոր և՛ մարմնավոր փայլով փայլեն»¹, մեկնեն իրենց «ծածուկ սրտերի լուսավորությունները (մտքերի գաղտնի խորհուրդները)»²:

Կորյունը յուր ուսուցչի մասին ձգտել է զգուշավոր խոսել, փորձելով մեկնել թե, «Ռոբվիետև իսկապես չէինք դիմանալ նրանց յուրաքանչյուրի բոլոր արածները գրքի մեջ նշանակելուն, ուստի պատասպարվեցինք (պաշտպանվեցինք) այս ավելի հեշտ ու դյուրինով-առաքելականով...»³:

Աստվածաբանական մեծ վեճերի ժամանակ Կորյունը գտնվում էր Պոլսում եւ Աբեղյանը ճիշտ է նկատում, թե «Նա (Կորյունը) իր ընկերների հետ՝ Հայաստան բերել է այդ (եփեսոսի) և Նիկիա ժողովների կանոնները»⁴:

Գրքի առաջաբանը, հարկավ, ուղղված էր Մաշտոցի, ապա նաեւ նրա աշակերտների հակառակորդների դեմ: Կորյունի երկը V դարի հայոց զրին վերաբերող ճշգրիտ սկզբնաղբյուր է հանդիսանում:

Մաշտոցի վարքագիրը իր ուսուցչի գործունեության շերտերը մեկնելով նշում է. «Պարծեալ՝ ամենքի հետ միասին ջանում է Քրիստոսի օրինակով կյանք վարել»⁵:

Նշանակում է, Մաշտոցը այն պատմական, վիպական, գրական հերոսն է, որը ձեռք է բերել բնավորության, տիպի, տիպային կերպարի հատկանիշներ, կրելով ուսուցվող նյութին հատուկ որակական հատկանիշներ թե՛ որպես պատմական, թե՛ հոգեւոր ու վիպական գործչի կերպար: Պատմիչն ինքն այստեղ բացահայտում է եռանդուն գործչի կերպարի ստեղծման մեթոդները: Կորյունը հաստատելով իր երկի ժանրի ընտրությունը եւ Մաշտոցի գործի գովաբանությունը, հատկանշում է՝ մեկնելով, թե «Տիրոջից է աստվածասեր ընտրյալների գովքը»⁶...

5444

1. Նույն տեղում, էջ 25
2. Նույն տեղում, էջ 29
3. Նույն տեղում, էջ 99
4. Աբեղյան Մ., Առաջաբան, Կորյուն, Վարք Մաշտոցի, Ե., Հայպետհրատ, 1941, էջ 11
5. Կորյուն, էջ 35
6. Նույն տեղում, էջ 35

Կորյունը դիտարկում է երանելի մարդու ինքնության խնդիրը նշելով. «Մաշտոցը... Տարոն գավառից էր, Հացեկաց գյուղից, Վարդան անունով երանելի մարդու որդին»: - Վարքագիրը ձգտում է մեկնել յուր ուսուցչի մանկական, պատանեկան տարիների կրթական զբաղվածության մասին, փորձելով կամաց-կամաց ամբողջականացման տանել Մաշտոցի կերպարի ստեղծման խնդիրը, ծրագիրը, որը ցուցում է նախաբանում Ա գլխում: «Անքանագյան ազգի և Հայաստան աշխարհի աստվածապարզ և գրի մասին, թե ե՞րբ և ո՞ր ժամանակ բաշխվեց և ի՞նչ պիսի մարդու ձեռով եղավ այդ աստվածային նոր տրված շնորհքը...»¹, ցուցելով. -Մանկական հասակում նա կրթվել էր հելլենական դպրությանը, ապա եկել, հասել էր Մեծ Հայաստանի Արշակունի թագավորների դուռը, կացել էր արքունի դիվանատանը՝ դառնալով արքայի տված հրամանի ծառայողը... Կորյունը վեր է հանում նաև Մաշտոցի աշխարհիկ, զինվորական գործչի կերպավորումը. «Նա տեղյակ ու հմուտ էր աշխարհական կարգերին, զինվորական արվեստով սիրելի էր դարձել իր զորականներին: Եվ այնտեղ հենց ջանալով ուշադրությամբ հետևում էր աստվածային զրքերի ընթերցանությանը, որով և շուտով լուսավորվեց ու թափանցեց, խորամուխ եղավ աստվածային հրամանների հանգամանքների մեջ, և ամեն պատրաստությամբ զարդարելով իրեն՝ իշխանների ծառայությունն էր կատարում»²:

Մովսես Խորենացին՝ Մեծն Մաշտոցի տաղանդափայլյալ աշակերտներից մեկը՝ հայոց պատմահայրը, խոնարհունով գրում է. «...Նա աշխարհային զբաղմունքներից փախչելով և դեն գցելով մարմնական պատիվը, զնում է երկնավորի հետևից...» (հատված երրորդ, խե)³:

Կորյունը վկայում է, որ Մաշտոցը Քրիստոսի կրոնը տարածեց թե՛ Գողթն, թե՛ Այունյաց, թե՛ այլ ժողովուրդների երկրներում ու Արենտահայաստանի կողմերում եւ այլ տեղերում, այսպիսով ընդգծելով Մաշտոցի հոգևոր գործչի կերպարի մի քանի առանձնադիտում եւս, որը պետք է ցուցելի դառնա թե՛ ավագ դպրոցի, թե՛ բուհի աշակերտ-ուսանողության ուսումնադասընթացներում:

Կորյունը մեկնում է Մաշտոցի գիր ստեղծելու խորհուրդին հետեւելու միտումը՝ «աշխարհահոգ խորհուրդը ժողովել և հայ ազգի համար նշանագրեր գտնել»¹, այն Մաշտոցի կերպարի մեջ քաղաքագետի գիծն է ընդգծում:

Քաղաքական ծանր պայմանները, Հայաստանի բաժանումը Պարսկաստանի եւ Բյուզանդիայի միջև (387 թ.), գրագրությունների օտար լեզուներով վարումը, երկու պետությունների վարած ձուլման քաղաքականությունը Մաշտոցին ստիպեցին հանգել մի հզոր կռվանի՝ հայոց գրի ստեղծման պատմական առաքելական մտքին... Հայոց գրի ստեղծման շուրջ տարակարծիք է հայ գիտական միտքը, սակայն այն ստեղծվել է 405թ. Եղեսիայում, Մաշտոցի կողմից:

Կորյունը այս մասին փաստագրում է. «...նա իր սուրբ աջով հայրաբար ծնեց նոր և սքանչելի ծնունդներ - հայերեն լեզվի նշանագրեր: Եվ այնտեղ (Եղեսիայում) շուտով նշանակեց, անվանեց ու դասավորեց, հորինեց սիգորքաներով - կապերով...»²: Ահավասիկ, ճիշտ է գնահատել Մաշտոցի գյուտարարական առաքելությունը ֆրանսիացի հայագետ Անտուան Մեյեն (այստեղ ընդգծվում է Կորյունի կերպարի լեզվաբանական շերտը) նշելով. «Հայերեն այբուբենի համակարգը գլխիցործոց է... Այդ լեզվի ճոխությունը, ճկունությունը զորավիգ են եղել հայ ազգի համար այդ թարգմանության օրից ի վեր...»³:

Կորյունը Մաշտոցի կատարած գյուտը որպես ազգի փրկության ծրագիր է ներկայացնում, շեշտելով մեծ լուսավորչի կերպարի, մեծ գյուտարար գործչի նկարագիրը, կոչումը:

Մաշտոցը իր Հովհան եւ Հովսեփ աշակերտների հետ թարգմանում են Սողոմոնի առակներից. «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»:

Մաշտոցի ծավալած կրթական-մշակութային գործը պետական մակարդակներ է ընդունում, եւ որին անպայմանորեն հարակա էր նաև նրա հեթանոսության, աղանդների դեմ ու քարոզչական գործունեության ընթացքը:

1. Լույս տեղում, էջ 23

2. Լույս տեղում, էջ 37

3. Մ. Խորենացու ասույթները, Ե., ԳԱ հր., 1991, էջ 45

1. Կորյուն, էջ 43

2. Լույս տեղում, էջ 49

3. Մեյեն Անտուան, Հայագիտական ուսումնասիրություններ, Ե., Երեւանի պետհամալսարանի հր., 1978, էջ 508

Ուսումնասիրողներից Լ. Բաբայանը գտնում է, որ Կորյունը Մաշտոցի «ծավալած գործունեությունը ներկայացնում է որպես մի ամբողջություն, միահյուսված, որպես մեկը մյուսի բաղկացուցիչ մասը»¹:

Լայնահորիզոն դրվածքով պետք է այս դեպքում ներկայացնել բուհում Մ. Մաշտոցի կերպարի ուսուցումը և որոշակի փոփոխված սեղմությամբ՝ ավագ դպրոցում:

Անթրոպական սկզբունք նախապայմաններից մեկն էլ նախօրոք ընթերցվելիք գրքերի ցանկը ներկայացնելն է ու նրանց հերթական դասավորությունն էլ առիթ էր ընթերցելու (նորից նախօրոք) համապատասխան մատենագրական երկասիրություններ, որոնց քննարկման ժամանակ վեր է խոյանում Մ. Մաշտոց Լուսավորչի, այս անգամ ամբողջության մեջ՝ մանկավարժի կերպավորումը պատմական երկասիրությունների մեջ:

Ահավասիկ, Մաշտոցի ծավալած կրթական, աստվածաբանական, քաղաքական, թարգմանական, մարդասիրական, դպրոցական, քերթողական, իմաստասիրական, տրամաբանական, գրական, երաժշտական, կանոնակարգման գործում ավելի արժեքավոր, գիտական է դառնում նրա կերպարի ցուցումը...

Իսկ այս հզոր ծավալայնությունը առաջին հերթին հայ գրի հզորության հետեւանք էր: Մ. Սկրյանը այսպես է դիտում այդ հարցը. «Բոլոր դեպքերում ամենակարեւոր կողմը նրա մեծագործության այն է, որ նա կարողացավ հաղթահարել ժամանակի գիտության մակարդակով պայմանավորված բոլոր դժվարությունները՝ մեծ ճշտությամբ որոշել է հայոց լեզվի բոլոր հնչյունները իրենց նրբերանգներով»²:

Լեոն Մաշտոցի կերպարը ավելի է ընդգծում, քննելով նրա համճարի անպարփակությունը. «...Ահա իսկապես վիթխարի աշխատանք, մտառամջությունների մի կույտ, որի մեջ համճարը միայն կարող էր գլուխ չկորցնել»³:

Փառավոր է Մ. Մաշտոցի գործունեության վերջին դրվագները Կորյունի վարքագրության մեջ՝ յուր ուսուցչի նպատակաուղղվածության

հարցում. այն ազգային համախմբման, համազգային գաղափարակառույցի համառ ու լուսեղեն, գաղտնավոր, տեսլական ու շոշափելի ծրագիր պետք է դիտել. «Եվ այսպես՝ Հայաստանի, Վրաստանի և Աղվանքի բոլոր կողմերում իր ամբողջ կյանքի ընթացքում ամառ ու ձմեռ, գիշեր ու ցերեկ, անվեհեր և առանց ընավ հասպաղելու, իր իսկ ավետարանական և ողջապատում վարքով ամենափրկիչ Հիսուսի անունը կրեց իր անձի վրա թագավորների, իշխանների ու բոլոր հեթանոսների առաջ և առանց ընդդիմության հակառակորդների կողմից: Եվ ամեն մարդու զարդարեց Քրիստոսի զգեստով...»⁴:

Կորյունը ներկայացնում է Մաշտոցին որպես գրական ստեղծագործողի կերպավորում, նաև վկայելով 23 ճառից բաղկացած ժողովածուի՝ «Հայխճապատում ճառք»-ի մասին. «Մաշտոցը բարձրագույն ուսումով սկսեց կարգել և հորինել հաճախագույն, դյուրապատում, շնորհագիր, բազմադիմի ճառեր»², որոնց վերնագրերը համապատասխանում էին իրենց բովանդակությանը:

Կորյունը վկայում է, որ Մաշտոցը անվերջ բանտարկյալներ, նեղյալներ, դատապարտյալներ է ազատել թշնամյաց ձեռքից, մուրհակներ պատռելով, շատերին հույս տալով «և ամենքին ընդհանրապես՝ փոխեց, աստվածապաշտության, կարգ ու կանոնի մեջ դրեց»³: Այստեղ ընդգծված ենք տեսնում Մաշտոցի ծավալած հասարակական ու մարդասիրական գործունեությունը, որը հատկանշում է նրա կերպարի մի քանի դրսևորումներ եւս, որոնք պետք է ընդգծելի լինեն նրա կերպարի ուսուցման ընթացքում թե՛ ավագ դպրոցում, թե՛ բուհում:

Մաշտոցը դպրոցներ բացեց, մանուկներին, երիտասարդներին, ընդհանրապես բոլոր խավերին կրթեց՝ մի հույժ կարեւոր խորհուրդ ունենալով...

Քանզի, թե՛ հայոց ամենագոր գիրը, թե՛ քրիստոնեությունն էր ազգապահպանության միջոց գտնում, այն որպես ազգային արժեքների նոր տիպի մոդելի ստեղծման ծանր ու հաստատուն կշռաքար ներկայացնելով, ուստի միջնորդավորմամբ այն ազգ դիտույթ պետք է որակել: Մաշտոցը Կրաց, Աղվանից ժողովուրդների համար գրեթե ստեղծելով, փորձում էր համախմբել Անդրկովկասի ժողովուրդներին՝ թշնամյաց դեմ ընդհանուր ճակատ կազմելու համար... «Քրիստոսի զգեստով ու հոգեպես... ժամանակ առ ժամանակ իր անծով հենց՝ օրինակ էր ցույց տալիս նրանց...»⁴:

1. Բաբայան Լ. Գ., *Դրվագներ Հայաստանի վաղ ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության (V-VIII դարեր)*, Ե., ՀՍՍՀ ԳԱ հր., 1977, էջ 46
2. Սկրյան Մ., *Հայ հին գրականության պատմություն*, Ե., Երեւանի համալսարանի հր., 1976, էջ 122
3. Լեո, Մ. Մաշտոց, *Թիֆլիս*, 1904, էջ 176

1. Կորյուն, էջ 79-80
2. Նույն տեղում, էջ 79
3. Նույն տեղում, էջ 81
4. Կորյուն, էջ 80-81

Նա Արցախում՝ Հայոց Արեւելից Կողմանքում, բացեց 5 դպրոց, առաջինը՝ Ամարասում... Եվ բազմաբնույթ գործունեություն էր ծավալել Արցախում: Եվ զարմանալի չէ, որ մեծ Լուսավորչի հսկայածավալ գործունեությունը եւ՝ Հայաստանում, եւ՝ Անդրկովկասում, եւ՝, հատկապես՝ Արցախական աշխարհում, հետագա ժամանակներում ունեցավ հզոր լուսավորչական, կրթական, մշակութային կյանքի առաջընթաց, զարգացում...

Այսպիսով, ի նկատի ունենալով Կորյունի «Վարք Մաշտոցի» երկասիրությունը ամբողջացվեց Մաշտոցի կերպարի բազմաշերտ քննումները, որոնք մեծ պատասխանատվությամբ պետք է ուսուցանվեն թե՛ ավագ դպրոցում, թե՛ բուհական դասընթացներում եւ թե՛ ընդհանրապես...

Մեծ հեղափոխական գիտնականը մահացավ «Մեհեկան (փետրվար) ամսի տասներեքին...»՝ 440թ. փետրվարի 17-ին:

Մաշտոցի երեւելի սաներից Մ. Խորենացին Մաշտոցյան կերպարի մեկնումը սիրելի ուսուցչի մահվան կապակցությամբ հետեւյալ կերպ է վավերագրում. «Սուրբ Սահակի վախճանվելուց վեց ամիս հետո, մեհեկան ամսի տասներեքին, երանելի Մեսրոպն էլ այս աշխարհից փոխվեց Վաղարշապատ քաղաքում, գերազանցելով բոլոր առաքինի մարդկանցից, որպիսիք այն ժամանակ կային: Որովհետև ամբարտավանությունը և մարդահաճությունը նրա վարքում երբեք տեղ չգտան, այլ հեզ, բարյացակամ և բարեմիտ լինելով, երևում էր բոլորին՝ երկնայինների սովորությամբ զարդարված: Որովհետև նա հրեշտակի տեսք ուներ, ծնող միտք, պայծառ էր խոսքով, գործերով՝ ժուժկալ, մարմնով՝ փառասեր, սովորություններով՝ անմման, խորհրդակցությամբ՝ մեծ, հավատով՝ ուղիղ, հույսով՝ համբերող, սիրով՝ անկեղծ, ուսուցանելիս՝ անձամձրույթ» (հատված երրորդ, Կէ):

Մ. Մաշտոցի խոնարհ աշակերտներից Պ. Սեւակը այսպես է շնջացել հայերենի համամարդկային արժեքի մասին. «Գալով անհիշելի ժամանակներից, անցնելով բազում դարերի միջով, շփվելով բազմաթիվ ազգերի լեզուներին՝ հայոց լեզուն մի յուրատեսակ հանրագիտարան է անհիշելի ժամանակների, բազում դարերի եւ բազմաթիվ այլ ազգերի: Այսպես դատելով՝ մեր լեզուն միայն մեզ չի պատկանում, այլեւ աշխարհին: Նա միայն մեր սրբությունը չէ, այլեւ մասունքը հանուր մարդկությանը»:

1. Մ. Խորենացու ասույթները, Ե., 77 զԱ հր., 1991, էջ 51
2. Մեհրաբյան Է., Ե., «Պարբերական», 1990, էջ 147

Եզրակացություններ

Հայ գրականության դասավանդման, ուսուցման կրթա-դաստիարակչական աշխատանքների ժամանակ թե՛ ավագ դպրոցում, թե՛ բուհերում «Հայ գրականության նախագրային շրջանը. Մ. Մաշտոցի կերպարի ուսուցումը (միջանկյալ) ու Մ. Մաշտոցը եւ հայ գրերի գյուտը» թեմաների դասավանդման ընթացքում հարկ է կենտրոնանալ Կորյունի «Վարք Մաշտոցի» երկասիրության հետեւյալ սկզբունքների վրա.

ա) Համապատասխան պատմաքննական, բնագրային աղբյուրների հանձնարարում՝ նախնական ընթերցանության համար, կապված ուսումնական նյութի հայթիայթմանը (եթե հատկապես այն գրական արձակ երկերին է վերաբերվում) եւ յուրացմանը:

բ) Տեսական-գրականագիտական, բնագրային նյութը լսարանին ներկայացնելու ընթացք. պետք է հաշվի առնել աշակերտի, ուսանողի անհատական առանձնահատկությունները:

գ) Ավագ դպրոցի ուսուցիչը եւ բուհի մանկավարժ-դասախոսը ներկայացնում են պատմական երկին հատուկ ուսուցման ձեւությները, պատմական, մշակութային, կերպարային նյութը:

դ) Ցույց է տրված, թե ինչ պատմական, քաղաքական հանգամանքների մեջ էր գտնվում Հայաստանը, նոր կրոնի ընդունումից՝ 301թ. հետո, մեկնված է Բյուզանդիայի եւ Պարսկաստանի քաղաքական, ռազմական, կրոնական դաժան եւ համառ քաղաքականությունը:

ե) Աշխարհակալ ու խորամանկ Բյուզանդիայի, Պարսկաստանի կողմից նպատակաուղղված, 387թ. կատարվեց Հայաստանի առաջին բաժանումը...

զ) Նախագրային շրջանի պետականությունից զրկված Հայաստան աշխարհի ծանր քաղաքական իրավիճակը՝ բյուզանդական (Արեւմտյան Հայաստան), ասորական, պարսկական (Արեւելյան Հայաստան) ճնշումները, ձուլման վտանգը...

է) Հայրենանվեր ամբողջացումներ. Մ. Մաշտոցի պատմական առաքելությունը:

Պատմական կերպարին հատուկ նրա՝ գլխավոր հերոսի, պատմության թատերաբեմ իջնելը... եւ գործունեության՝ կրոնական, քաղաքական եւ այլ բնույթի նպատակաուղղված անդրադարձները:

ը) Առաջին աշխարհիկ բովանդակությամբ պատմական երկը (վարքագրություն)՝ Կորյունի «Վարք Մաշտոցի»-ն ու նրա ուսուցման մեթոդ-լոգիան ավագ դպրոցում եւ բուհում:

Վշխարհիկ եւ հոգեւոր շերտերի, հասարակական խավերի ցուցումներ...

Երկասիրության կառուցվածքը, ժանրային առանձնահատկությունը, ձեւի եւ բովանդակության, հիմնական գաղափարի քննումները, Մ. Մաշտոցի կերպարի պատմական եւ փյախկան բարդույթը...

թ) Մ. Մաշտոցի նպատակաուղղված ծրագրայնությունը հայոց գրեթե՝ հոգեւոր ազատության անհաղթ գործոնի, ստեղծման պատմական առաքելությունը...

ժ) Հայոց ազգային եւ քրիստոնյա համագային գաղափարակառույցի ծրագրման եւ այն իրագործելի տեսնելու քաղաքական, պատմական, հերոսական մաքառումը, սրբացումը՝ մեծ գյուտարարի կողմից...

Կորյունի՝ Մաշտոցի կրտսերագույն աշակերտի, հայրենասիրական, զգուշավոր վարքագրությունը յուր անգուգական ուսուցչի հայոց աշխարհի համար ամենադրամատիկական ժամանակաշրջանի հանճարեղ քաղաքագետ-հայրենասերի, հեղափոխականի, լուսավորչի, գյուտարարի, քրիստոնեական կրոնի տարածողի, աղանդների, մեստորականության դեմ պայքարողի, Հայաստանի, Վրաց, Աղվանից երկրների ժողովուրդների համար գրեթե գյուտարարի, ժամանակի տարաբնույթ, մութ եւ վտանգավոր հոսանքների, երեւոյթների՝ ասորական, պարսկական, հոգեւոր եւ աշխարհիկ առաջնորդների, ուղղությունների դեմ հակահարվածողի, քրիստոնեական կրոնը որպէս համախմբող ուժ, ամենուր անձանձիւր տարածողի, թարգմանության, դպրոցաշինության, դպրության, մատենագրության, կանոնապահության, հելլենական դպրության ջատագովի, հարստահարիչների, հեթանոսության դեմ պայքարողի, հայ հասարակական խավերին աջակցողի հանդէպ ակնածանքով, պատկառանքով, խորագույն սիրով է չի՝ անվերջ զգուշավոր պահվածքով: Միա այս դիտույթներից էլ նա Հայաստանի պետականությունից զրկված նկարագրի բարդույթին զուգահեռ գծում է մեծ գիտնական-մտածողի, քաղաքագետի, ազգային գաղափարագետի, թարգմանչի, լեզվաբանի, գրողի, բանաստեղծի, հոգեբանի, երաժշտի՝ մշակութային-կրթական, հասարակական, բարեգործական, զինվորական, հոգեւոր,

աշխարհիկ գործչի վեհ կերպարը՝ ամբողջացված վարքագրության ժանրի տակ՝ «Վարք Մաշտոցի» երկասիրության մեջ...

Դարերի խաժամուժ հոսքերում, ժամանակների անբարենպաստ պայմաններում 1600-ամյա հավերժական ընթացով, սրաթեւ արծվի պէս սլանում է հայոց գիրը՝ Մ. Մաշտոցի հմուտ ու հանճարեղ զորավարական առաջնորդությամբ...՝ վավերագրելով հայ ժողովրդի գյուտելու եւ լինելիության խորհուրդը, ստեղծագործ հանճարը, լուսապաշտության հավիտենական տենչը, ազատասիրելու վսեմականը, հարատևելու տիեզերաընթացը...

Հարկավ, ինչպէս մեծն ուսուցչապետի նվաստ աշակերտը՝ Պ. Սեւակը կասեր.

Իսկ իսկնություն չէ՞,

Որ գորքից հետո,

Միշտ էլ լեզուն է մարտադաշտ հանում,

Եվ ինձ չի կարող ո՛չ մի գորք անել՝

Լեզուն է անում...՝

Կորյունի «Վարք Մաշտոցի» երկասիրությունը եւ նրա կերտած Մ. Մաշտոցի կերպարի ուսուցման բարդույթը ավագ դպրոցի եւ բուհի ուսանողության եւ, ամբողջության մեջ՝ հայ ժողովրդի համար որպէս մշտախոհ, մշտավառ կերոն՝ արդիական է, առաջնային, արժանի հատուկ ուշադրության՝ զուգակցված մեթոդական, ուսուցողական, գիտական համակարգերի անընդհատ նորոգվող չափանիշներով: Այն, միաժամանակ, հայոց ազգային գաղափարակառույցն մատնանշող երեւոյթ պետք է ընդունել...

1. Սեւակ Պ., *Եվ այդ մի Մաշտոց անուն, Ե., «Լույս» հր., 1991, էջ 33*

Явление М. Маштоца и проблемы
армянской национальной идеологии

Зинаида Аракелян-Балаян

Резюме

Армянская национальная идеология как научно строящаяся, подтверждающаяся, оценивающаяся система в периоды своего развития исходит от своего существования, творения- защиты и любя свободу создает духовный отсвет, подтверждающие интересные и самобытные проявления. Как явления величайшего, революционного, многослойного действия, преимущественно связанного с армянской словесностью, различными школами, с созданием и утверждением культуры, создателем и основоположникам армянской национальной идеологии следует считать и утвердить М. Маштоца.

**The phenomenon of M. Mashtots and
the problems of Armenian National Ideology**

Zinaida Arakelian-Balayan

Resume

The Armenian National Ideology as scientific constructing, improving, appreciating system in the developing period proceed from its existence, the creation- defending and loving freedom.

Creating, spiritual light which improved interesting and original manifestation. As a great phenomena, revolutionary, many- layers actions, mainly connected with the Armenian eiteratuie, various schools, the creator and the founder of the Armenian National Ideology we ought to consider and confirm M. Mashtots.

**ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀԱՅ ԳՐԵՐԻ, ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ**

Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ...
Մեսրոպ Մաշտոց

Նա (Մեսրոպ Մաշտոցը) սիրեց մենակեցության վարքը, ինչպես ասել է մեկը, թե աչեկո՞ված նավն շտապում է դեպի նավահանգիստը, իսկ ժուժկալ մարդը անապատ է փնտրում:

... Հայկական չափուն ծնեալ ծնունդս նորոգ եւ սքանչելի՝ սուրբ աջո՞վն իւրով, նշանագիրս հայերէն լեզուին...

Կորյուն

Ողբում եմ քեզ, Հայոց աշխարհ, ողբում եմ քեզ, հյուսիսային բոլոր ազգերի մեջ վեհագույնդ, որովհետեւ վերացան թագավորդ ու քահանայդ, խորհրդականդ ու ուսուցանողդ, վրդովվեց խաղաղությունը...

Մովսես Խորենացի

Եվ արդ, արդարեւ քեզ եմ գանձեալ դառնքս այսօրիկ,
Դժնդակք եւ տաժանելի աւթեվանք անըմբերելեացդ

պատուհասից...

Գրիգոր Լարեկացի

Մաշտոցի հրաշալի ստեղծագործության հայկական այբուբենի կատարելությունը, աշխարհի մեծագույն լեզվաբանների զարմանքն է առաջացրել...

Էդմոնդ Շուց

... Հայոց լեզվի մեջ, անկախ հնդեվրոպական շերտից, տեսնում ենք բառերի զարմանալի հարստություն եւ ձևերի անսահման ընտրություն...

Նիկողայոս Մար

Ամեն բան քայքայվեց Հայաստանում, հայ ժողովրդի շուրջը ամեն բան փուլ եկավ, բայց կանգուն մնաց լեզուն՝ հարուստ, հոյակապ,

պատկառելի: Իսկ լեզուն պետականություն կորցրած, ստրկացած մի ժողովրդի համար ամեն ինչ է...

Հովհաննես Թումանյան

Դու և հայ դպրությանց անշրջանակ լուսամուտ...
Դու և անհպելի մատենագիր մայր-բարբառի...

Սիամանթո

Փառք հայ տառերուն, որոն անհիմանալի խնամիությամբ մոզական գրիչներու տակ հավաքված եղիշեին լեզուն ոսկի ըրին, Բագրատունիին՝ աղամանդ, եւ Ալիշանին ու Հայրիկինը՝ մեղր քաղցրահամ: Հայ լեզուն այդ տառերու սանդղատամատերուն վրա ուտն առ ոտն բարձրացավ ամեն դարու ճակատին վրա հոն փորագրելու համար անմահությունը մեր ցեղին...

Դանիել Վարուժան

Հայ լեզուն տունն է հայուն աշխարհիս չորս ծագերուն,
Ուր կը մտնե ամեն հայ՝ իբրեւ տանտեր հարազատ...

Սուշեղ Իշխան

Այս մատյանները հին, մագաղաթյա,
Այս հաստակող գրքերը ձեռքով գրված,
Ձարդարել եք մի օր դուք արվեստով ամենո,
Միջնադարյան մռայլ կամարների ներքո...

Եղիշե Չարենց

Արտաշեսյան զորաբանակների ու Տիգրան Մեծի այրուձիուն վոխարինելու եկած մի ոգեղեն զորագունդ է Հայոց նորահնար այբուբենը...

Ասատուր Մնացականյան

Սայրենի լեզվի բառերը մենք զգում ենք, ապրում, իսկ օտար լեզվինը՝ հասկանում, սովորում, հիշում...

Ավետիք Իսահակյան

Բարբարոսներ շատ կզան ու կանցնեն անհետ,
Արքայական խոսքը մեր կմնա հավետ...

Վահան Տերյան



Բանաստեղծուհի, գրող, բանասեր, գրականագետ, մանկավարժ...

Ծնվել է Վարանդական աշխարհի Ավետարանոց մելիքամիստուն 1954 թ. մարտի 19-ին՝ Չկներ համաստեղության տակ, ձիու տարում:

1978-79 թթ. ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետը:

Ակսած 1987 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներից եւ շարունակաբար՝ Արցախյան ազգային-ազատագրական շարժման ընթացքում հետապնդվել է ՊԱԿ-ի գործակալների կողմից:

Շարժման ակտիվ մախանձախնդիրներից, նախաձեռնողներից եւ մասնակիցներից է (արգելված ցուցահանդեսների կազմակերպում, փաստաթղթերի ստորագրում, համաժողովրդական միտինգների եւ ցույցերի մասնակցում, հաճախ՝ ղեկավարում, միտինգներում հրապարակային ելույթներ):

1989 թ. մասնակցել է «Ամարաս» բարեգործական միության ստեղծմանը, ընտրվել է քաղաքային միության անդամ:

1991 թ. ԱրՊՀ դասախոս է:

1994 թ. ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում պաշտպանել է քեկնածուական թեզ «Մուրացանի «Գեւորգ Սարգսյետունի» պատմավեպը եւ նրա պատմական աղբյուրները» թեմայով եւ ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

1995 թ. «Նաիրի» հրատարակչությունը (Երեւան) լույս է ընծայել «Շառավիղեպան» քերթվածների ու պոեմների անդրամիկ ժողովածուն:

ԼԴՀ գրողների միության անդամ է 1999թ.:

1999 թ. Ստեփանակերտի «Սոնա» հրատարակչությունը լույս է ընծայել «Արցախ-դաժան սեր» տարեգիրքը, որի մեջ գետեղված են Զինաիդա Ու Յոն Իկ-ի քերթվածներից եւս:

Արվեստական շնորհները, գեղագիտական կատարումները՝ անզուգական ազգային պարը, ասմունքը, թատրոնը զուգահեռվեցին քերթվածի, արձակի արտահայտություններին, ստեղծումներին, ապա՝ երիտասարդական ու հասունության տարիներին, այդ ամենին համաքայլ՝ գրականագիտական հետազոտություններին, մեկնումներին, գնահատումներին՝ կապված հայ, ռուս գրական, մշակութային արժեքների քննությանը:

«Դպրատուն» գրական, մշակութային, ուսանողական խմբակը՝ Գեղարվեստի թատրոնը, որը արձանագրել է գեղագիտորեն հարուստ եւ իմաստալից, նպատակաուղղված, երկար տարիների գործունեություն, հիմնադրել եւ ղեկավարում է 1980 թվականից ցայսօր: Լույս է ընծայում «Նարեկ» պատկերազարդ պատի թերթը (ձեռագիր) «ԲԱՆՔ ՄԵԾԱՑ», «ԲԱՆՔ ԻՄԱՍԱՄԱԻՐԱՑ», «ԲԱՆՔ

ՔԵՐԹՈՂԱՑ ԵՎ ԲԱՆԱԴՅՈՒՄԱՑ», «ԲԱՆՔ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ», «ԲԱՆՔ ՔՆՆԱԴԱՎՏՈՂԱՑ» եւ այլ խորագրերով:

Խմբակի ծրագիր-նպատակ-խորհուրդը մեկն է՝ բացահայտել եւ զարգացնել ուսանողության ստեղծագործական շնորհները...՝ գեղարվեստի ցուանքները արժեւորելով որպէս վեհոքնն ապրելու, պայքարելու, արարելու, հարատեւելու խոհ ու խորհուրդ, ոգեղեն միրվանա, ստեղծելով ուսանողական-երիտաւարդական գեղարվեստի հիշողության դաշտ...

2003 թ. «Սոնա» հրատարակչությունը լույս է ընծայել «Վիրակապ չիանդուրժող թելը» պատմվածքների անդրամիկ ժողովածուն:

2004 թ. Երեւանի «Հայաստան» հրատարակչությունը «Դիզակ» տպարանում լույս է ընծայել «Արցախը XIX դարի գրականության մեջ եւ մշակույթում» (պատմաբանասիրական-քննական տեսություն) ընդհանուր խորագիր կրող ուսումնասիրության առաջին մասը՝ «Պլատոն Զուբովի «Ղարաբաղի աստվազետը» պատմավեպը» ենթավերնագրով:

2005 թ. Ստեփանակերտի «Արցախի պետական համալսարան» հրատարակչությունը լույս է ընծայել «Մեսրոպ Մաշտոցի կերպարի ուսուցման արդիական ձեւաբարդույթը բուհական եւ դպրոցական կրթահամակարգերում» մեթոդական ձեռնարկը՝ նվիրված հայ գրերի գյուտի եւ Ամարասի առաջին դպրոցի ստեղծման 1600-ամյա հաղթահանդեսներին:

2006 թ. «Սոնա» հրատարակչությունը վերահրատարակել է «Վիրակապ չիանդուրժող թելը» պատմվածքների ժողովածուն:

2006 թ. «Սոնա»-ում հրատարակվող այս «Մեսրոպ Մաշտոց երեւոյթը եւ հայոց ազգային գաղափարաբանության բարդույթը» քննական, գիտամեթոդական ուսումնասիրության հրատարակմանը զուգահեռ լույս է ընծայվում նաեւ «Սերգեյ Սարինյանի քննահամակարգը» մենագրությունը:

Հիմք ընդունելով ԱրՊՀ գիտական խորհրդի (19.11.2005) որոշումը, 2005 թ. դեկտեմբերի 23-ին ՀՀ ԲՈՅ-ի (թիվ 80 արձ.) որոշմամբ ստացել է դիպլոմ (Դ Ռ Օ1042)՝ դոցենտի գիտական կոչումով:

Ներկայումս ԱրՊՀ գրականության եւ լրագրության ամբիոնի դոցենտ է: Գրականագետը իր ակտիվ մասնակցությունն է բերում Արցախի գրական, հասարակական, մշակութային, գիտական, մանկավարժական, ուսանողական կյանքին՝ գիտական կոնֆերանսներում, մշակութային միջազգային համագումարներում, ԼՂՀ ԳՄ միջոցառումներում հանդես գալով ելույթներով, գիտամեկնաբանական, բանասիրաբնական հոդվածներով, քերթվածներով, պատմվածքներով, Գեղարվեստի թատրոնի բարձրարվեստ միջոցառումներով, ցուցահանդեսներով, «Նարեկ»-ի հերթական համարների լույս ընծայմամբ:

Անչափահասությամբ հանդերձ, երեք որդիներից (Հովիկ (16 տարեկան), Մարիա, Մխիթար(14 տարեկան)) ուստրերը, ակտիվորեն մասնակցել են Արցախի ազգային-ազատագրական պայքարի թե՛ մարտերին վիրավորվել...

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մեսրոպ Մաշտոց երեւոյթը եւ հայոց ազգային գաղափարաբանության բարդույթը 3

Մեսրոպ Մաշտոցի կերպարի քննման, ուսուցման, գնահատման արդիական մեկնությունը (բուհ եւ հանրակրթական (ավագ) դպրոց)..... 11

Եզրակացություններ 23

Резюме, Resume 26

Իմաստասիրություններ հայ գրերի, հայերենի եւ հայոց լեզվի մասին..... 27

Զինափղա Առաքելյան-Բալայան (կենսագրական) 29

Ձինաիդա Վանյայի Առաքելյան-Բալայան

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ԵՐԵՎՈՒՅԹԸ

ԵՎ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ

ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ

ԲԱՐԴՈՒՅԹԸ

(գիտամեթոդական ձեռնարկ-ուսումնասիրություն)

Շապիկը՝ Մնացական Ազիզյանի

Խմբագիր՝	Սոկրատ ԽԱՆՅԱՆ
Վերստուգող սրբագրիչ՝	Լիլյա ԳՐԻԳՈՐՅԱՆ
Գամակարգչային աշխատանքը՝	Լիլյա ԳՐԻԳՈՐՅԱՆԻ

*Գեղինակային հասցե.-
ԼՂԴ, ք. Ստեփանակերտ, փ.*

Ա. Գեքիմյանի 11, բն. 60,

Գեռախոս.- 42671

Գանձնված է շարվածքի 28.09.2006 թ.: Ստորագրված է տպագրության 30.11.2006 թ.:
Տառատեսակ՝ «Arial Armenian»: Թուղթ՝ օֆսեթ, 84x60 1/16: Տպագրական 2 մամուլ:
Տպագրությունը՝ օֆսեթ: Տպաքանակ՝ 500: Գինը՝ պայմանագրային:

«ՄՈՆԱ» գրահրատարակչություն
ք. Ստեփանակերտ, Ազատամարտիկների, 16

Գեռ. 51555